ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մայիսի 2016թ. թիվ 78-Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱԿԱՐԴԱԿՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԿԱԶՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ԹԻՎ 183-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Սոցիալական աջակցության մասին'' ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով, ,,Իրավական ակտերի մասին'' ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի փետրվարի 11-ի թիվ 25-Ն հրամանով

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի տարածաշրջաններում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների աշխատակարգը /համաձայն թիվ 1 հավելվածի/,
2. Հաստատել ՀՀ Տավուշի մարզի Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի տարածաշրջաններում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների կազմերը, համաձայն թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5 հավելվածների/:
3. Խորհուրդների գործունեության ընթացքում առաջնորդվել Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, սույն որոշումով հաստատված համակարգող խորհուրդների աշխատակարգով և այլ իրավական ակտերով:
4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետի 2014 թվականի սեպտեմբերի 11-ի թիվ 115-Ա որոշումը:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի վրա:
6. Որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

25 մայիսի 2016թ.
Ք. Իջևան

Հավելված 1.
ՀՀ Տավուշի մարզպետի
2016թ. մայիսի 30-ի
թիվ 78-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ, ԲԵՐԴԻ,ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱ-ՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1. Սույնով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի, Դիլիջանի, Բերդի և Նոյեմբերյանի տարածաշրջաններում կնքված սոցիալական համագործակցության համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն ձևավորված համակարգող խորհուրդների (այսուհետ՝ Խորհուրդ) աշխատակարգը:

2. Խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին Հայաստան իՀանրապետության մարզպետի որոշման մեկ օրինակը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի սոցիալական աջակցության տարածքային գործակալությունը հինգ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է Խորհրդի անդամներին:

3. Խորհրդի առաջին նիստը հրավիրում և վարում է տարածքային մարմնի ղեկավարը:

4. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդ իկազմը հաստատվելուց հետո հրավիրված առաջին նիստում, Խորհրդի անդամների թվից՝բաց քվեարկությամբ, Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, երկու տարի ժամկետով, բայց ոչ ավելի խորհրդի տվյալ անհատական կազմով գործելու ժամկետի ավարտը:

5. Խորհրդի նախագահի ժամկետից շուտ վերընտրություն հնարավոր է՝

1) Խորհրդի նախագահի հրաժարականի դեպքում.

2) Խորհրդի անդամների երկու երրորդի կողմից Խորհրդի նախագահի հրաժարականի գրավոր պահանջի դեպքում:

6. Խորհուրդը գործում է հասարակական հիմունքներով:

7.Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է «Սոցիալական աջակցության մասին» և «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին, Հայաստանի Հանրապետության օրենքներին, Համաձայնագրին, սույն աշխատակարգին և այլ իրավական ակտերին համապատասխան:

8. Խորհրդի նիստերի անցկացման և (կամ) աշխատանքների իրականացման վայրը տարածքային մարմնի գտնվելու վայր նէ:

II.ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9.Իր իրավասության շրջանակներում Խորհուրդը՝

1) քննարկում և ուսումնասիրում է սոցիալական աջակցություն հայցող անձանց ներկայացրած դիմումները, փաստաթղթերը և կողմնորոշում նրանց սոցիալական աջակցությունս տանալու հարցում.

2) իր անդամների (նրանց ներկայացրած կազմակերպությունների) ուժերով կազմակերպում է տնային այցելություն և տալիս առաջարկություն՝ սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված դեպքերում և կարգով՝ նպատակ ունենալով մեծացնել

կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ընտանեկան և սոցիալական նպաստներ, հրատապ օգնություն) հասցեականությունն ու համակարգի թափանցիկությունը.

3) իրականացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 30-ի N 145-Ն որոշման NN3, 8 և 12, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N1069-Ն որոշման N2 հավելվածներով Խորհրդին վերապահված լիազորությունները.

4) ստեղծում է համապատասխան աշխատանքային խմբեր՝ լրացուցիչ ուսումնասիրություններ կատարելու անհրաժեշտության դեպքում.

5) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ինչպես նաև Համաձայնագրով սահմանված այլ լիազորություններ:

III. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Խորհուրդն աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են առնվազն ամիսը մեկ անգամ:Նիստերը գումարվում են նաև Խորհրդի նախագահի կամ տարածքային մարմնի ղեկավարի նախաձեռնությամբ:

11.Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

12.Խորհրդի նիստերը հրավիրում և վարում է Խորհրդի նախագահը, Խորհրդի նախագահի բացակայության դեպքում՝ Խորհրդի նախագահի հանձնարարականով՝ Խորհրդի անդամներից մեկը (իսկ դրա անհնարինության դեպքում՝ տարածքային մարմնի ղեկավարը):

13.Խորհրդի նիստի անցկացման վայրը տարածքային մարմնի գտնվելու վայրն է: Խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կարողեն գումարվել նաև արտագնա նիստեր: Խորհրդի նախագահը որոշում է Խորհրդի նիստի անցկացման օրը, ժամը և վայրը:

14.Խորհրդի նախագահի հրավերով նիստին կարող են մասնակցել շահագրգիռ անձինք կամ նրանց օրինական ներկայացուցիչները, ինչպես նաև Համաձայնագրի այլ կողմերի, պետական կառավարման և տեղական ինքնակառավարմա նմարմինների ու զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

15.Խորհրդի նախագահը՝

1) հրավիրում և վարում է Խորհրդի նիստերը,

2) ստորագրում է Խորհրդի որոշումները, այլ փաստաթղթերը (քաղվածքներ, արձանագրություններ, առաջարկություններ և այլն),

3) իրականացնում է սույնաշխատակարգով սահմանված այլ լիազորություններ:

16.Տարածքային մարմինն ապահովում է Խորհրդի աշխատանքների կազմակերպական և գործավարական սպասարկումը՝

1) կազմում է Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը Խորհրդի անդամների և իր, ինչպես նաև Համաձայնագրին միացած այլ կողմերի ներկայացրած առաջարկությունների հիման վրա.

2)նիստի օրակարգի նախագիծը Խորհրդի անդամներին է ուղարկվում (այդ թվում՝ էլեկտրոնային փոստի միջոցով) նիստի ցառնվազն երկու աշխատանքային օր առաջ.

3) արձանագրում է նիստը և արձանագրությունը ներկայացնում ստորագրման Խորհրդի նիստի բոլոր մասնակիցներին՝ ավարտից հետո մեկօրյա ժամկետում:

17.Խորհրդի նիստի օրակարգում նշվում են՝

1) Խորհրդի նիստի անցկացման վայրը, օրը և ժամը,

2) քննարկվող յուրաքանչյուր հարցը, զեկուցողի անունը, ազգանունը,

3) Խորհրդի նիստին հրավիրված անձանց անունները, ազգանունները, զբաղեցրած պաշտոնները (իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումները):

19.Խորհուրդը նիստերի ընթացքում որոշումները կայացնում է բաց քվեարկության միջոցով, նիստի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումը կայացվում է հոգուտ սոցիալականա ջակցություն հայցող անձի:

20. Որոշմանը դեմ քվեարկած Խորհրդի անդամը կարող է հատուկ կարծիք ներկայացնել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) և (կամ) տարածքային գործակալությանը և (կամ) Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

21. Տարածքային մարմնի համապատասխան աշխատողը Խորհրդի նիստում կայացրած որոշումները, ինչպես նաև այլ փաստաթղթերը (արձանագրություններ, քաղվածքներ, կարծիքներ և այլն) դրանք ստորագրվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում (ուղարկում) է տարածքային մարմնի ղեկավարին և (կամ) այլ համապատասխա նկազմակերպություններին ու պաշտոնատար անձանց:

22.Խորհրդի կայացրած որոշումները տարածքային մարմնի կողմից չկատարման (առաջարկությունները չբավարարվելու) դեպքում Խորհուրդը կարող է այդ մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության մարզպետին:

23. Խորհուրդն իրականացրած գործունեության մասին կիսամյակը մեկ անգամ ամփոփ տեղեկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N38 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած Հայաստանի Հանրապետության մարզերի զարգացման ծրագրերի կազմման ու իրականացման հայեցակարգով նախատեսված մարզային զարգացման հանձնաժողովին, ինչպես նաև նախարարությանը:

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Տավուշի մարզպետի
2016թ. մայիսի 30-ի
թիվ 78-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԻՋԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ

1. ՀՀ Տավուշի մարզի Իջևանի տարածաշրջանում սոցիալական համագործակցության համաձայնագրի համակարգող խորհրդի կազմը.

- Արմենուհի Չիբուխչյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Իջևանի ՍԱՏԳ-ի մասնագետ,
- Մանյա Պարոնյան - ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Իջևանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ,
- Սմբատ Ցուցույան - ,,Զբաղվածության պետական ծառայություն'' գործակալության Իջևանի զբաղվածության մարզային կենտրոնի տնօրենի տեղակալ,
- Էմիլ Բրուտյան - ՀՀ ԱՍՀՆ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Տավուշի մարզի Իջևանի ԲՍՓՀ-ի բժիշկ,
- Լիլիթ Ղալումյան – Իջևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ,
- Վարդուշ Ներսիսյան –Աղավնավանքի դպրոցի տնօրեն,
- Արմինե Ներսիսյան - ,,Հույսի կամուրջ'' ՀԿ-ի Իջևանի մասնաճյուղի փոխնախագահ,
- Գրիգոր Նազինյան - ,,Իջևանի ԱԱՊԿ'' ՓԲԸ-ի տնօրեն,
- Գեղամ Փիրումյան - ,,Գետահովիտի ԱԱՊԿ'' ՓԲԸ-ի տնօրեն:

/ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված 3.
ՀՀ Տավուշի մարզպետի
2016թ. մայիսի 30-ի
թիվ 78--Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ

1. ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի տարածաշրջանում սոցիալական համագործակցության համաձայնագրի համակարգող խորհրդի կազմը.

- Նաթելլա Ղազարյան – ՀՀ տավուշի մարզպետարանի աշխատակազմի Դիլիջանի ՍԱՏԳ-ի մասնագետ,
- Անահիտ Եգանյան - ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Դիլիջանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ,
- Ֆլորա Մարգարյան - ,,Զբաղվածության պետական ծառայություն'' գործակալության Դիլիջանի զբաղվածության կենտրոնի գլխավոր մասնագետ,
- Էմիլ Բրուտյան - ՀՀ ԱՍՀՆ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Տավուշի մարզի Դիլիջանի ԲՍՓՀ-ի բժիշկ,
- Պապիկ Թամամյան – Դիլիջանի համայնքապետարանի աշխատակից, համայնքի ղեկավարի խորհրդական,
- Արմենակ Մանթաշյան – ,,Արմենակ Սուրենի Մանթաշյան'' ԱՁ-ի տնօրեն,
- Գայանե Ալիխանյան - ,,Հույսի կամուրջ'' ՀԿ-ի ներկայացուցիչ,
- Էսմա Զարգարյան –Դիլիջանի ավագ դպրոցի ներկայացուցիչ,
- Դարիկո Աթաբեկյան - ՀՀ ԱՍՀՆ Դիլիջանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն'' ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ,

/ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված 4.
ՀՀ Տավուշի մարզպետի
2016թ. մայիսի 30 -ի
թիվ 78-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԲԵՐԴԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ

1. ՀՀ Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանում սոցիալական համագործակցության համաձայնագրի համակարգող խորհրդի կազմը.

- Բաղալյան Շողիկ – ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի Բերդի ՍԱՏԳ-ի մասնագետ,
- Մաթևոս Ծատուրյան - ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Բերդի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ,
- Անտիկա Աղաբաբյան - ,,Զբաղվածության պետական ծառայություն'' գործակալության Բերդի զբաղվածության կենտրոնի մասնագետ,
- Էմիլ Բրուտյան - ՀՀ ԱՍՀՆ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Տավուշի մարզի Բերդի ԲՍՓՀ-ի բժիշկ,
- Հասմիկ Մելիքյան - - Բերդի քաղաքապետարանի ներկայացուցիչ,
- Արմեն Հովակիմյան – Վորլդ Վիժն Հայաստան, ՀՀ Տավուշի մարզի զարգացման ծրագրի Բերդի գրասենյակի ներկայացուցիչ,
- Լուսինե Թումանյան - Բերդի ավագ դպրոցի ներկայացուցիչ,
- Նաթելլա Թումանյան - ,,Հույսի կամուրջ'' ՀԿ-ի Բերդի մասնաճյուղի ներկայացուցիչ,
- Զվարդ Ծատուրյան - ,,Բերդի ԲԿ'' ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ:

/ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված 5.
ՀՀ Տավուշի մարզպետի
2016թ. մայիսի 30-ի
թիվ 78-Ա որոշման

ՑԱՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ **ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ** ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԻ

1. ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանում սոցիալական համագործակցության համաձայնագրի համակարգող խորհրդի կազմը .

- Վարդուշ Զաքարյան – ՀՀ տավուշի մարզպետարանի աշխատակազմի Նոյեմբերյանի ՍԱՏԳ-ի մասնագետ,
- Շուշանիկ Հարությունյան - ՀՀ աշխատանքի և սոց. հարցերի նախարարության Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի Նոյեմբերյանի սոցիալական ապահովության տարածքային բաժնի մասնագետ,
- Արշակ Գիշյան - ,,Զբաղվածության պետական ծառայություն'' գործակալության Նոյեմբերյանի զբաղվածության կենտրոնի մասնագետ,
- Վահագն Աթոյան - ՀՀ ԱՍՀՆ բժշկասոցիալական փորձաքննության գործակալության Տավուշի մարզի Լոռու թիվ 2 ԲՍՓՀ-ի նախագահ,
- Լուսինե Անտոնյան -,,Հույսի կամուրջ'' ՀԿ-ի Նոյեմբերյանի մասնաճյուղի ներկայացուցիչ,
- Աստղիկ Քառյան – Բերդավանի գյուղապետարանի ներկայացուցիչ,
- Էմմա Ալեքսանյան - ,,Նոյաստղ'' ՀԿ-ի նախագահ,
- Կարո Կարապետյան – Վորլդ Վիժն Հայաստան, ՀՀ Տավուշի մարզի զարգացման ծրագրի Նոյեմբերյանի գրասենյակի ներկայացուցիչ,
- Սուսաննա Գիշյան –Նոյեմբերյանի ավագ դպրոցի ներկայացուցիչ:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ԴԱՎԹՅԱՆ